ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (VIII դասարան)

ՀԱՐԳԵԼԻ ՝ ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է *10* առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է *5* միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է *60* րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.

Համ__նթաց, առ__ջ, ա__բարտավան, ինքն__ստինքյան, հինավուր__, ան__գուտ, նա__թ, ուղ__ճար, խուր__, փա__ցնել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Ընդգծել մեծատառով գրվող բառերը.

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՆԱՐ-ԴՈՍ, ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ», ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՌՅՈՒԾԱՁԵՎ ՄՀԵՐ, ՐԱՖՖՈՒ «ԽԵՆԹԸ», ՁԱԽՈՐԴ ՓԱՆՈՍ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Սյունակներից առանձնացնել և կողք կողքի գրել հոմանիշ բառերը (հոմանիշների 5 եռյակ).

1. առինքնող	1. չափավոր	1. հմայիչ
2. ժուժկալ	2.ամբողջ	2. զուսպ
3. բովանդակ	3 ճերմակ	3. ողջ
4. բարակ	4. գեղեցիկ	4. ձյունաթույր
5. սպիտակ	5. քերծե	5. որսաշուն

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.Կազմել տրված գոյականների հոգնակի թիվը.

կայսր _____

թոռ_____

մանկագիր_____

հանքափոր_____

վաչկատուն_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընդգծել ածականի գերադրական աստիճանի օրինակները.

Ամենակուլ, ամենից պայծառ, ամենախոշոր, կպրագույն, խստագույն, ամենագեր, ամենակեր, ամենից քաջ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Սյունակներում առանձնացնել որակական և հարաբերական ածականները.

Ձմեռային, անրջային, բիրտ, թավշյա, ամուր, կիսակառույց, համր, հղի, փայտե, ճենապակյա:

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ	ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Առանձնացնել և սյունակներում գրել.

Նրանք, հետո, ո՞ր, հանկարծակի, ամբողջ, առաջ, միասին, միշտ, այսպիսի, յուրաքանչյուր:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	ՄԱԿԲԱՅՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Տրված թվականները գրել բառերով.

2010_____

199_____

13-րդ_____

II_____

$\frac{6}{5}$ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Որոշել տրված բայերի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.

պատմի՛ր _____

կկարդայիք _____

սիրում եք_____

պիտի գնաս_____

մեծանամ_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի հերթականությունը.

ա/ Գործակալություն, ընդունել, տոմս, նախնական, պատվեր:

_____

_____

_____

բ/ Ես, խորհել, դուք, ասել, մասին, և, անել, եզրակացություն:

_____

_____

գ/ Գարուն, զորավար, զորքով, դիմել, դեպի,Արարատյան, դաշտ:

դ/ Ծաղիկ, բույր, խենթացնել, բոլոր, այցելու:

ե/ Անահիտ, չնկատել, թե, ինչպես, նա, հեռանալ, տուն: